«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Մանկավարժական աշխատողի համագործակցություն սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում**

Դաստիարակ՝ **Տաթևիկ Հայրապետյան**

Մանկապարտեզ՝ **« Ծիծեռնակ » ՀՈԱԿ**

2023թ.

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում ---------- 5

1.1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները----------7

1.2 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած 2 սկզբունքները---------- 9

1.3 Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության ուղղությունները---10

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք---------- 12

Եզրակացություն---------- 16

Գրականության ցանկ----------17

Ներածություն

<<Ընտանիքը երեխայի մթնոլորտն է, նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը, նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները, բոլորն այն չափով, ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով, ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին>> (Ռաֆֆի)[1]:

<<Վաղ հասակի երեխաների մանկավարժները պետք է լիովին ըմբռնեն, խրախուսեն և խորացնեն ծնողների ու երեխաների միջև գոյություն ունեցող առաջնային կապվածությունը>> (Ջոնսթըն,1982)[2]:

Վաղ հասակի երեխաների կրթական ծրագրերի մեջ ընտանիքները ներգրավելու օգտին ամենածանրակշիռ փաստարկներից մեկն արտահայտել է հոգեբան Ուրի Բրոնֆենբրենները (1975թ.), որը նշել է, որ <<....այն ծրագրերը, որոնք հատուկ կարևորություն են տալիս երեխայի զարգացմանը նպաստող միջոցառումներին ծնողների ուղղակի մասնակցությանը, ամենայն հավանականությամբ կառուցողական ներազդեցություն կունենան ցանկացած տարիքում, սակայն որքան վաղ նախաձեռնվեն նման ծրագրերը և որքան ավելի երկար դրանք տևեն, այնքան ավելի շոշափելի է լինելու դրանց դրական ազդեցությունը երեխաների վրա>>[3]:

Թեև ընտանիքները վճռորոշ դեր են խաղում իրենց երեխաների կյանքում, նրանք ևս կախվածության մեջ են իրականացվող ծրագրերից ստացվող աջակցությունից ու միջոցներից , ինչպես նաև համայնքից:<<Ընտանիքները կարևորագույն օղակ են առողջ, կենսունակ և հոգատար երեխաների դաստիարակության համակարգում:

[1] Ս. Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան – 2008, էջ 259

[2] <<Քայլ առ քայլ>> երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 1997 էջ 4

[3] <<Քայլ առ քայլ>> երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 1997 էջ 45

Այդուհանդերձ, մենք գտնում ենք , որ ընտանիքները, ընդ որում բոլորն առանց բացառության , անկարող են իրենց այս կոչումը լավագույնս իրականացնել հոգատար ու զորեղ համայքի աջակցության բացակայության պայմաններում, քանզի

հենց համայնքն է, որ իր օժանդակությամբ ապահովում է ընտանիքների սեփական ռեսուրսների պաշտոնական և ոչ պաշտոնական համալրումները>> (Հոբս և այլք, 1984թ.)[4]:

Երեխայի դաստիարակությունը հարկավոր է սկսել ծնվելուն պես:Ինչպես Վ. Հյուգոն էր ասում. <<Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին, որոնք աճում են, ծավալվում նրա հետ և կազմում անկապտելի մաս>>:

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերը, չեն կարող փոխարինել միմյանց:

Հետազոտական աշխատանքիս նպատակը թեմայի ծանոթացումն ու մանրամասնորեն ուսումնասիրումն է, թեմայից ստացած տեսական գիտելիքների կիրառումն է ծնողավարության գործընթացում: Վերլուծել մանկապարտեզում ծնողների հետ փոխգործակցության արդյունավետ ձևերն ու մեթոդները:

[4]<<Քայլ առ քայլ>> երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 1997 էջ 46

Տեսական մաս

Գլուխ 1

Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Յ.Ա. Կոմենսկին նշում էր, որ << **մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ, հանգստյան օրեր, արձակուրդ>>**[5]:

Վերջապես , **<<Երեխան ընտանիքի հայելին է>>** սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում:

Ընտանիքն է սոցիալականացման առաջին օղակը, ուր սկիզբ է առնում երեխայի սոցիալական էությունը: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը,դաստիրակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր: Ընտանիքը մեծապես նպաստում է երեխայի ինքնահաստատմանը սոցիալական միջավայրում , նրա ստեղծագործական ներուժի և անհատականության բացահայտմանը:Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցվում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում:

Մանկապարտեզը և այլ նախադպրոցական կրթական հաստատությունները կոչված են իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական դաստիարակությունը: Նախադպրոցական հաստատությունների

[5] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան - 2008 էջ 259

հիմնական մանկավարժական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, նախադպրոցական երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Մանկապարտեզում է երեխան սկսում հաղորդակցվել և համագործակցել, որոշումներ կայացնել, համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ:

Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերը, որոնք չեն կարող փոխարինել միմյանց:Հաջողության պայմանն է՝ վստահության գործարար կապերի հաստատումը:

Հոգեբան Ա.Ն. Լեոնտևը նշում է, որ << նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ, ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ[6]:

Երեխաների սոցիալական զարգացման վրա ներազդումը իրականացվում է ընտանիքում: Սոցիալական զարգացումը ուղղված է երեխաների անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների ձևավորմանը:Սոցիալական փորձի ձեռքբերման գործընթացում ձևավորվում են անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ հասակակիցների և մեծերի հետ հաղորդակցվելու, ազատ ընտրություն կատարելու , որոշումներ կայացնելու, համագործակցային կարողություններ , ինչպես նաև հուզականորեն արձագանքելու , կարեկցելու, փոխօգնության և փոխզիջման ունակություններ ու հմտություններ: Հաղորդակցման կուլտուրան, փոխադարձ հարգանքը, անհատի առանձնահատկությունների ընդունումը, երեխայի շահերի

[6] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան - 2008 էջ 260

ընդհանրականությունը 2 կողմերի համար փոխշահավետ համագործակցության հիանալի հիմք են դառնում:

1.1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները.

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ:

Տ.Ա. Մարկովան երկար տարիներ ուսումնասիրելով ընտանեկան դաստիարակության առավելությունները, առանձնացնում է ընտանեկան երեք այն գործոնները, որոնք բնութագրում են ընտանեկան դաստիարակության հիմնական առանձնահատկությունները[7]:

Ընտանեկան դաստիարակության առաջին առանձնահատկությունը վերաբերում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին: Այստեղ բոլորը միմյանց հանդեպ քնքուշ են, սիրով, նվիրված, հավատարիմ: Կապված են միմյանց հետ ներքին հուզական կապով:

Երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական (տևական) բնույթն է: Ընտանեկան դաստիարակության **կայուն** և մշտական բնույթը ներգործում է ինքնադաստիարակության **սկզբունքով:** Օրինակ, կարելի է կանխատեսել ծնողի զայրույթը և **ձեռնարկել** համապատասխան քայլեր՝ ներողություն խնդրել: Արդյունքում, երեխան սովորում է համարժեք արձագանքել արտաքին իրողությանը:

Երրորդ առավելությունը երեխային ընտանեկան խնդիրների լուծմանը, լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է: Վաղ տարիքից երեխան կարող է ունենալ մշտական պարտականություններ: Հետևելով ծնողների վարքագծին և հարաբերու-

[7] Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան - 2008 էջ 261

թյուններին , երեխան սովորում է ճանաչել մարդկանց, տարբերում և գնահատում է նրանց գործողությունները ծնողների գործողությունների հետ համեմատելով, յուրացնում է մարդկային վարքագծի ընդունված ձևերը և կարողանում կողմնորոշվել սեփական ցանկությունների և կարողությունների մեջ: Ընտանիքում է զարգանում նրա սեռային ինքնագիտակցությունը, սեռային պատկանելությունը և հոգեկան սեռը:

Ընտանեկան դաստիարակության սկզբունքներն են՝

- մարդասիրություն և գթասրտություն
- երեխայի հանդեպ սիրո և հարգանքի
- ընտանեկան փոխհարաբերություններ կառուցելիս լավատեսություն
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատման
- երեխայի ներկայացվող պահանջների միասնականության
- ծնողների հեղինակության անսասանության, նրանց կարծիքի գերակացության
- հետևողականության և պահանջկոտության
- երեխային ընտանիքի գործությանն ակտիվ ներգրավելու:

Հայ ընտանիքներին ավանդաբար բնորոշում են ընտանեկան դաստիարակության որոշ թերություններ

- երեխաների ֆետիշացումը, նրանց քմահաճույքների անհապաղ կատարումը
- ծնողների հեղինակության արժեզրկումը, նրանց կարծիքի և որոշումների անտեսումը
- դաստիարակության ավանդական մոտեցումների, ճնշող դաստիարակության գերակայությունը
- երեխային ներկայացվող պահանջների անկայունությունը, միասնականության բացակայությունը
- դաստիարակության խոսքային եղանակների, քարոզչության գերակայությունը,

երեխայի ինքնուրույնության անտեսումը

- հուզական դրսևորումների կտրուկ փոփոխությունը, հուզականության անկայունությունը դաստիարակության ընթացքում
- կենցաղային մշակույթի ցածր մակարդակ
- դաստիարակության փորձը մանկավարժական գիտելիքներով հարստացնելու, նորն ընդունելու անկարողությունը, մանկավարժորեն կրթվելու ցանկության բացակայությունը:

1.2 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է 2 սկզբունք.

-Նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու,

-Նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու:

Առաջին սկզբունքը ենթադրում է ընտանիքի բոլոր անդամների ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին, որից էլ շահում են մանկապարտեզի մանկավարժական գորընթացի բոլոր սուբյեկտները,և սա էլ նպաստում է երեխաների դաստիարակությունը համակցված, փոխպայմանավորված, և փոխպատասխանատու գործողությունների միջոցով:Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը:

Մանկապարտեզի դեպի ներս բաց լինելու սկզբունքը ենթադրում է մանկապարտեզի մանկավարժական գործընթացին նպաստող ներխուժող յուրաքանչյուր ներգործության ընկալում, ընդունում և կիրառում:

Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է մանկապարտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը: Մանկապարտեզը պատրաստ պետք է լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ: Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկական ակումբների ,մշակութային հաստատությունների հետ:Կենսական անհրաժեշտություն է ժամանակի պահանջ մանկապարտեզի համայնքի վարչական միավորների հետ փոխադարձ կապի հաստատումը:

1.3 Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության ուղղությունները .

- **Առավոտյան հանդիպումներ.**
- **Ծնողական ժողովներ.**
- **Ծնողական համաժողովներ**
- **Շաբաթական կամ ամսական լրատուներ.**
- **Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին.**
- **Գրքերի փոխանակումներ.**
- **Տնայց.**
- **Բաց դռների օրեր .**
- **Մանկավարժական հյուրասրահ.**
- **Հեռախոսային զանգեր.**
- **Կլոր սեղան.**
- **Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.**

- **Փառատոներ և տոնակատարություններ.**

- **Սպորտային միջոցառումներ.**

- **Ցերեկույթներ.**

- **Ոչ պաշտոնական գրառումներ.**

- **Անհատական գրառումների գրքույկներ.**

- **Առաջարկությունների տուփ:**

Գլուխ 2

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ

Հիմնական մաս.

- Ինչու՞ է անհրաժեշտ մանկապարտեզ և ընտանիք փոխգործակցությունը:

Քննարկում

- Ի՞նչ գիտենք ծնող-մանկապարտեզ համագործակցության մասին:

Նպատակ՝

- Ծնողների մոտ հավատ ներշնչել, վստահություն՝ ապահովելով երեխայի անհատականության ամբողջական զարգացումը:

Հետազոտական ընթացք - 2023թ. Նոյեմբերի 24-ին միջին IIա <<Ծիածան>> խմբում իրականացրել եմ ծնողական ժողով: Ներկա էին 30 ծնողներից 25-ը, բացակա էին 5-ը՝ հարգելի պատճառով:

Օրակարգ

1. Անդրադարձ մեր անցած ուղուն:

2. Մանկապարտեզ- ընտանիք փոխհամագործակցություն

Խմբի նոր ձևավորման փուլում քիչ ծնողներ էին ներգրավված մանկապարտեզի առօրյային, իսկ եռամսյակի վերջում բավականին աճ գրանցեցինք:Շարունակեցի ակտիվ համագործակցել ծնողների հետ՝ ուժեղացնելով այդ կապը: Եվ հույս ունեմ ,

որ կունենամ էլ ավելի բարձր ցուցանիշ:

Խթանման փուլ

Նախապատրաստելով ծնողներին նյութի ընկալմանը՝ անդրադարձանք մեր անցած ուղուն՝ հիշելով մեր աշխատանքային գործունեությունը՝ մանկապարտեզի համար ծնողների կողմից ճոճանակների , խաղալիքների, գրքերի, ծաղիկների նվիրատվություն, ազատ շփումներ՝ անհատական, խմբային, էքսկուրսիաներ, միջոցառումներ, ծառատունկ, բերքահավաք... Միջոցառումների ցանկից վերհիշեցինք նոյեմբերի 7-ին կայանալիք << EXPO_2023 >> մեր աշնանային ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր ծնողների նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ: Քրտնաջան աշխատանքն էլ գնահատեցինք՝ համտեսելով աշնան անուշահամ բերքն ու բարիքը, ծնողների ձեռքով պատրաստած քաղցրավենիքը, ժենգյալով հացը...

Բարձր գնահատեցինք ծնողների և երեխաների կողմից համատեղ պատրաստած ձեռքի աշխատանքները: Միջոցառման վերջում տնօրինության կողմից արժանացանք պատվոգրի:

Ծնողները հասկացան, թե ինչքան կարևոր է իրենց դերը մանկապարտեզի աշխատանքային գորընթացում, որի արդյունքում փոխադարձ հարգանք է ձևավորում:

Իմաստի ընկալման փուլ

Բացատրեցի նոր նյութի վերաբերյալ իրենց գիտելիքները՝ ներգրավվելով նրանց քննարկվելիք նյութի մեջ: Ձևավորեցի գիտելիքների և հմտությունների ձեռք բերելու ձգտում: Այսպիսով երկար դիտարկումից հետո հասկացանք ինչ մեծ գործ ենք արել:

Ծնողների մոտ հետաքրքրություն առաջացրի , ապահովեցի տեղեկատվության ընկալման ինքնավերահսկում: Եվ այս ամենը վերլուծելով ծնողները կարողացան արտահայտել իրենց կարծիքը՝ իրենց բառերով և ձևակերպումներով, հասկացան մեր մանկավարժական գործունեության կարևորությունը: Ծնողները հասկացան, թե ինչքան կարևոր է իրենց դերը մանկապարտեզի աշխատանքային գործընթացում, որի արդյունքում փոխադարձ հարգանք է ձևավորվում: Նոր ստացած տեղեկատվությունը կարողացան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով:Սա հնարավորություն է տալիս ծնողներին ոչ միայն մասնագիտական գիտելիքներ կուտակել երեխաների դաստիարակության հարցում, այլև վստահելի հարաբերություններ հաստատել դաստիարակի հետ: Քննարկման վերջում լսեցի ծնողների առաջարկությունները՝ մանկապարտեզի հետ համատեղ աշ-խատանքի վերաբերյալ:

Կշռադատման փուլ

Այստեղից հետևություն, երբ որ համագործակցում են միևնույն գաղափարի շուրջ, ապահովում են երեխայի ներդաշնակ դաստիարակությունը:

Դիտարկում

Ներկա գտնվելով Ը. Տաթևիկի կողմից կազմակերպված ծնողական հանդիպմանը, կարող եմ ասել, որ այն հաջողված էր, հագեցած և արդյունավետ, քանի որ կարողացավ հասնել իր նպատակին՝ ձեռք բերելով վստահություն և համագործակցություն ծնողների շրջանում:

Տնօրեն՝ Լ. Ազարյան

Կարող եմ նշել, որ ծնողական հանդիպումը տեղի ունեցավ ջերմ, անկաշկանդ մթնոլորտում: Ակնհայտ էր, որ համագործակցությունը ծնողների հետ ճիշտ էր, քանի որ երկկողմանի աշխատում էին միևնույն գաղափարի շուրջ: Քննարկվում էին համագործակցությունը բարելավելու արդյունավետ ուղիների , ինչպես նաև դրա շրջանակները լայնացնելու մասին հարցեր:

Մեթոդիստ՝ Ռ. Օհանջանյան

Եզրակացություն

Ուսումնասիրելով այս թեման՝ եկանք մի շարք մանկավարժական եզրահանգումների.

Երեխաների պատասխանատվության հիմնական կրողը դա ընտանիքն է, իսկ մանակապարտեզը ավարտին է հասցնում նրա գործը:

- Հաջողության պայմանն է ընտանիք- մանկապարտեզ համագործակցությունը:
- Ծնողին ընդգրկելով մանկապարտեզի առօրյային ամրապնդվում է ընտանիք- մանկապարտեզ կապը:
- Եվ այս համագործակցությունից էլ շահում են 3 կողմերը՝ ընտանիք- մանկապարտեզ- երեխա:
- Որպեսզի անհատական մոտեցում դրսևորվի երեխայի նկատմամբ, պետք է 2 կողմերն էլ ունենան գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, տիրապետի դաստիարակության առանձնահատկություններին, կարողություններին:
- Շատ կցանկանայի, որ մանկապարտեզում տեղի ունեցող յուրաքանչյուր գործունեությունում ծնողներն ունենան ակտիվ մասնակցություն, որպեսզի նրանց ներգրավվածության ցուցանիշն ավելի բարձրանա:
- Կցանկանայի, որ դաստիարակները ուշադրություն դարձնեն հետագա իրենց աշխատանքի ընթացքում ծնողների մանկավարժական կրթության նպատակի վրա՝ ծնողներին զինելով որոշակի նվազագույն գիտելիքներով, օգնելով նրանց ինքնակրթության կազմակերպման, կրթական հմտությունների գործում:

Գրականության ցանկ

1.<<Նախաշավիղ>> Լ. Սմբատյան – Ընտանիքի և Մանկապարտեզի համագործակցությունը՝ որպես երեխայի դպրոց ընդունվելու կարևորագույն պայման 4-5 2008 էջ 55-67

2 .<<Նախաշավիղ>> Լ. Թովմասյան – Ծնող - ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա 5. 2010 էջ 57-59

3. <<Քայլ առ քայլ>> երեխայակենտրոն դասասենյակների ստեղծումը 1997 էջ 45-80

4. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր Ծրագիր Երևան 2007 էջ 136-138

5. Մանկապարտեզի միջին խմբի (4-5տ.) կրթական համալիր Ծրագիր Երևան 2011 էջ 158-162

6. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան - 2008 էջ 257-283

7. Հասմիկ Միտոյան , Լալա Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>> Երևան 2010 էջ 208-221